# ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՄԵԾ ՏՕՆԸ

—o—

## ՅՈԲԵԼԵԱՆԻ ՇՈՒՐՋԸ

—

Թիֆլիսի թեմի առաջնորդը հրաւիրաթղթեր է ուղարկել Թիֆլիսի պետական հասարակական և կուլտուրական հաստատութիւններին և բարձրաստիճան անձանց՝ ամսոյս 13-ին, ցերեկուայ ժամը 2-ին ներկայ լինելու յոբելեանական հանդէսների բացմանը Ներսիսեան դպրոցի նոր շէնքի դահլիճում։

—

Ժողովրդի մէջ տարածելու համար՝ Թիֆլիսի թեմի որոշ մասերն արդէն ուղարկուած է Լէօի «Հայ գրքի տօնը» գրքոյկից։

—

Դպրոցական ֆոնդի օգտին Թիֆլիսի թեմի առաջնորդարանում ստացուել են հետեւեալ նուէրները. Յովհ. Ղորղանեանից—50 ր., Նիկ. Աբրահամեանից—40 ր., տիկ. Հայկ. Մարտիրոսեանից—25 ր., Ռոս. Մարտիրոսեանից—100 ր., Թիֆլիսի Զորաբաշի Ս. Գէորգ եկ. ծխականներից Գ. աւ. քահ. Մանդակունու ձեռքով—21 ր., ընդամենը 236 ռուբ.։

---

## ՅՈԲԵԼԵԱՆԸ ԹՈՒՐՔԱՀԱՅԵՐԻ ՄԷՋ

—

Պոլսի հայ թերթերի մէջ կարդում ենք հետեւեալը.

Վարչութիւնը շրջաբերականներ ղրկելով ամէն առաջ, յանձնարարած էր որ գրոց գիւտի և տպագրութեան յոբելեանի հանդէսները կատարուին պատշաճ հանդիսաւորութեամբ։ Ուստի ժողովը պէտք տեսաւ, որ ազգին կեդրոնն ալ նոյն օրը պաշտօնական հանդէս մը կատարէ, և նկատողութեան առաւ ատենադպիր Գասպարեան էֆ.-ի պատրաստած մէկ ծրագիրը նոյն հանդէսին համար և սահմանեց պէտք եղած կարգադրութիւնները։ Փափաք յայտնեցաւ թէև որ հանդէսը տեղի ունենայ կիրակի օր, սակայն ամէն թաղ նոյն օրը իր մէջը եկեղեցական և ազգային հանդէս կատարելու պատրաստուած ըլլալով, որոշուեցաւ շաբաթ օր կատարել նոյն հանդէսը ի Մայր եկեղեցի, նախագահութեամբ Տեղապահ Ս.-ին, որ պիտի պատարագէ ի ներկայութեան յատկապէս հրաւիրեալ երեսփոխանաց, ժողովականաց, տեսուչ խորհրդոց և Թաղական խորհրդոյ անդամոց և ազգին ամէն դասակարգի ներկայացուցիչներուն։ Պատրիարքարանը և վարժարանները փակ պիտի մնան նոյն օրը, դպրոցական պատգամաւորութիւններ ալ պիտի մասնակցին այս եկեղեցական հանդէսին։ Պատարագէն յետոյ տեղի պիտի ունենայ ազգային և գրական հանդէս մը։ Հրաւէր պիտի ուղղւի նաև հայ—հռոմէական և Հայ-բողոքական պաշտօնական ներկայացուցիչներու, բերելու համար իրենց մասնակցութիւնն այս Համազգային Տօնին։ Ընդհանուր կարգադրութեանց հսկելու համար յանձնաժողով մը կազմուեցաւ, անդամ նշանակելով Ասլանեան Վ. և Յակոբոս քհ., Տիկնայք՝ Զապէլ Ասատուր, Զապէլ Եսայեան, Զարուհի Գալէմքեարեան, Արշակուհի Թէոդիկ, Ակիւլինէ Պօյաճեան, Տեարք՝ Եդուարդ Շիրինեան, Ներսէս Օհանեան, Գարգե Փափազեան, Վռամշապուհ Սամուէլոֆ և Միհրդատ Հայկազն։ Ուստի ժողովն իր այս կարգադրութիւնները պիտի հաղորդէ նաև բոլոր առաջնորդներուն, որպէս զի անոնք հանդիսաւորապէս կատարեն սոյն տօնը եկեղեցական և ազգային հանդէսով։ Կը լսենք որ Պոլսոյ Հայ վաճառականներն և բոլոր առեւտրական դասը որոշած են հոկտ. 12 ի այս հանդէսին օրը փակել վաճառատուններն ի պատիւ սոյն ազգային տօնին։ Որոշուած է որ ընտրուած յանձնաժողովը կրթական ֆոնդի համար գումար մը հանգանակելու ձեւն ալ որոշէ, տոմսակներ տպագրելով և դիմումներ կատարելով։

—

Ազգային մեծ տօնը Եւդոկիոյ մէջ

Եւդոկիա, 17 սեպտ.

Ամսիս 15-ի կիրակի, Թաշվիրացի տօնին օրը կանխաւ եղած կարգադրութեան համաձայն, քաղաքէս 4 ժ. հեռու ս. Յովհ. Ոսկեբերանի վանքին մէջ տեղի ունեցաւ յոբելեանական մեծ հանդէս ի յիշատակ հայ գիրերու գիւտի 1500-ամեակին և հայ տպագրութեան 400-ամեակին, և ի պատիւ մասնաւորապէս առաջին հայ տպագրիչներէն Եւդոկիացի Աբգար դպիրի։ Հանդէսը սարքուած էր առաջնորդարանի կողմէ կազմուած Յոբելեանական Մասնախումբիս կողմէ, որուն կը նախագահէր առաջնորդ գեր. Տ. Շաւարշ ծ. վ. Սահակեան և ատենապետն էր մեր հայրենակից գրագէտ Յ. Գազանճեան։ Մասնաւոր հրաւէրով ներկայ էին Սեբաստիոյ Գեր. Առաջնորդ Տ. Թորգոմ եպիսկ., որ նախագահեց յոբելեանական հանդէսներուն. ներկայ էին նաև Սեբաստիոյ, և քաղաքիս թեմերէն՝ Հէրէկի, Զիլէի ու Նիքսարի, ինչպէս նաև տեղական Ազգ. պաշտօնական մարմիններու և հայ կուսակցութեանց կողմէ ղրկուած պաշտօնական ներկայացուցիչներ, և Թօգատէն ու շրջակայ քաղաքներէն և գիւղերէն հասած հազարաւոր անձերու ստուար երկսեռ բազմութիւն մը։ Ի յիշատակ այս հանդէսին, պատրաստուած էր Սահակի, Մեսրոպի, Աբգար դպրի և վանքին պատկերները կրող գեղարուեստական ճաշակաւոր գարդ-բոսդալ մը որ հանդէսին օրը ի վաճառ հանուեցաւ։

Կիրակի առտուան պատարագէն ետք, զոր կատարեց Տ. Թորգոմ սրբազան, ժամը 6-ին սկսաւ հանդէսը վանքին առջև հարթ և ընդարձակ կալատեղիին մէջ, որ շքեղապէս զարդարուած էր և որուն ճակատը զետեղուած էին Ս. Սահակի և Ս. Մեսրոպի ու Աբգար դպրի մեծադիր պատկերները՝ կանաչներու և գոյնզգոյն դրօշակներու մէջտեղ։ Յաջորդաբար տեղի ունեցան հինգ բանախօսութիւններ՝ նիւթ ունենալով Հայ գիրերու գիւտը, Հայ տպագրութիւնը, Աբգար դպիրի կեանքն ու գործը, հայ գրի և տպագրութեան ազդեցութիւնը՝ Հայ քաղաքակրթութեան վրայ, և այլն։ Իւրաքանչիւր բանախօսութենէ վերջ՝ տեղի կունենային երգեր Ազգ. վարժարանի երգեցիկ խումբին կողմէ, դարլեալ երգեր, խաղեր, Արևելեան և եւրոպական պարեր մանկապարտէզի երկսեռ բազմաթիւ մանուկներու կողմէ՝ առաջնորդութեամբ իրենց վարժուհիին՝ Օր. Նարդուհի Ճէզվէճեանի, ինչ որ խիստ հաճելի տպաւորութիւն թողուց ներկաներու վրայ։—Իրիկուան դէմ Թաշվիրացի արարողութիւնը մեծահանդէս կատարուեցաւ բացօթեայ և գիշերը վանքիս մէջ պաշտօնական սեղան տրուեցաւ 50-է աւելի հրաւիրեալներու։ Բաժակաճառեր արտասանուեցան Էջմիածնի և Կիլիկիոյ կաթողիկոսներուն, Պոլսոյ պատրիարքին և այլ պաշտօնական անձերու և մարմիններու կենաց։ Սեղանը վերջացաւ խիստ ոգևորեալ տրամադրութիւններու մէջ, որմէ յետոյ՝ ներկաներու խումբը թափօր կազմելով և երգերով ու ջահավառութեամբ գնաց վանքին կալատեղին։ Այնտեղ ևս մինչև կէս գիշեր տեղի ունեցան հրախաղութիւններ և ժողովրդային խաղեր, պարեր, նուագածութիւն ու խրախճանութիւններ։ Այսպէս վերջացաւ հանդէսը և հետեւեալ օրը ժողովուրդը ցրուեցաւ հաճելի յիշատակ մը տանելով իր հետ։

(«Բիւզ.»)

---

## ԳՐԱԿԱՆ ՖՈՆԴ

—

Խմբագրութիւնս ստացաւ 65 ռուբ. գրական ֆոնդի օգտին, հետեւեալ նուիրատուներից. 1) Յովհ. Թումանեան—25 ր., 2) Յովհ. Ամիրխանեան—25 ր., 3) Յակ. Քոչարեան—5 ր.։